



«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն շարունակում է իր աշխատանքները «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում:

2019թ-ի ապրիլի 12-ին ծրագրի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Ալավերդի բազմաբնակավայր համայնքում: Հանդիպման նպատակը ֆոկլուս խմբային քննարկումների իրականացումն էր շահագրգիռ կողմերի հետ: Ֆոկլուս խմբային քննարկումներ անցկացվեցին Ալավերդի համայնքի ՏԻՄ աշխատակիցների, համայնքում գործող ՀԿ ներկայացուցիչների և ակտիվիստների, ընտանիքների հետ:

Քննարկումների ընթացքում վեր են հանվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չափորոշիչների իրականացման առանձնահատկությունները ծառայություն մատուցողների և ստացողների համար:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է

Եվրոպական միության կողմից:

